

Ի.ՅԱ. ԱՐՈՒՖԱՆ

Մանր կորուստ կրեց վրաց գիտական միտքը. վախճանվեց մեծանուն բանասեր, Կ. Կեկելիձեի անվան ձեռագրերի ինստիտուտի ղեկավար, Վրացական ՍՍՀ ԳԱ թղթակից-անդամ, գիտության վաստակավոր գործիչ, բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆ. Իլյա Վլադիմիրովիչ Արուլաձեն:



Ի. Վ. Արուլաձեն իր ստեղծագործական ողջ կյանքը նվիրաբերեց վրացագիտությանը և հայ-վրացական բանասիրությանը՝ ստեղծելով այդ ասպարեզում ուսումնասիրությունների մի ամբողջ շարք, որոնք բնագիտության ճանաչում ու համարվ բերեցին նրան:

Լինելով հմուտ վրացագետ և հայագետ, նա շարունակեց հայ-վրացական բանասիրության դասական ավանդները՝ իր երկասիրություններում պարզաբանելով հայ-վրացական գրական, լեզվաբանական, պատմական առնչությունների զրահորումները, մեկնության կարոտ մի շարք հարցերի տալով յուրովի բացատրություն:

Պրոֆ. Արուլաձեն հայագիտության ամենաեռանդուն ներկայացուցիչներից մեկն էր Վրաստանում: Անվանի գիտնական Լ. Մելիքսեթ-Քեկի և պրոֆ. Արուլաձեի ղեկավարությամբ աճել է վրացի երիտասարդ հայագետների մի ամբողջ սերունդ:

Ի. Վ. Արուլաձեն ծնվել է 1901 թ., Զեստաֆոնիի շրջանի Զեդա-Սաքարա գյուղում, ուսուցչի ընտանիքում: Միջնակարգ կրթությունը ստացել է Քութաիսի առաջին գիմնազիայում:

1922 թ. ընդունվել է Թբիլիսիի պետական համալսարան, նախընտրելով լեզու և գրականություն մասնագիտությունը: Համալսարանը դերազանց ավարտելուց հետո նա ընդունվում է ասպիրանտուրա հայ-վրացական բանասիրության գծով և մինչև կյանքի վերջը իր իմացություններն ու ողջ եռանդը նվիրում այդ գործին:

Բեղուն ու արգասավոր է եղել պրոֆ. Արուլաձեի գրիչը՝ շուրջ 100 տպագիր աշխատություններ, որոնց զգալի մասը ծավալուն մենագրություններ են: Հատկապես նշանակալից են վրաց գրականության հին հուշարձանների՝ «Շուշանիկի նահատակության», «Բալասզարի իմաստության», «Վազրենավորի», Սուխան-Սարա Օրբելիանու երկերի հրատարակություններն ու ուսումնասիրությունները: Վրաց հին գրականության զանազան հարցերը միշտ էլ շթուլացող հետաքրքրություն են առաջացրել գիտնականի մեջ, իսկ ձեռագրերը (վրացերեն, հայերեն լեզու պարսկերեն) միշտ էլ եղել են նրա ուշադրության կենտրոնում: Պրոֆ. Արուլաձեի նախաձեռնությամբ է, որ հիմնադրվել է Կ. Կեկելիձեի անվան ձեռագրերի ինստիտուտը, որի անիոփոխ ղեկավարը եղել է նա, ղեկավարել ձեռագրերի նկարագրության 15 հատորանոց մատենաշարը, հրատարակել «Վրացական գրի նմուշներ» նշանավոր հավաքածուն:

Երկու հարևան ժողովուրդների՝ հայերի և վրացիների դարավոր գրականության ու մշակույթի փոխազդեցությունների բաղմապիսի հարցերը միշտ էլ եղել են գիտնականի մտահոգության ու հետադոտության առարկան: Պրոֆ. Արուլաձեն, փայլուն տիրապետելով գրաբարին, երկար տարիներ Թբիլիսիի համալսարանում դասավանդել է հին հայերեն, բաղմիցս եղել Հայաստանում, ուսումնասիրություններ կատարել էջմիածնի պրապահոցում, իսկ այնուհետև՝ Մատենադարանում, ուշագրավ գեկուցումներով հանդես եկել մեզ մոտ կաղձակերպված գիտա-ժողովներում, հողվածներ տպագրել հայագիտական հանդեսներում: Երկար տարիներ նա եղել է «Պատմա-բանասիրական հանդեսի» խմբագրական կոլեգիայի անդամ:

Նրա դոկտորական դիսերտացիան՝ «Հայ և վրաց գրականությունների առնչությունները IX—X դդ.» ուսումնասիրությունը, որը 1944 թ. լույս տեսավ առանձին գրքով, լուրջ ներդրում է հայ-վրացական դասական բանասիրության մեջ: «Հայ մատենագիրները Վրաստանի մասին», «Հովհաննես Դրասխանակերտցի» հետադոտությունները, «Քարթլիս ցխովրեբախի» գրաբար

քնադրի հրատարակությունը՝ վրացերեն թարգմանությամբ և ուսումնասիրությամբ հանդերձ, մեծ արժեք են ներկայացնում աղբյուրագիտական ու պատմական մի շարք հարցերի մեկնաքանման ու ճշտման համար:

Պրոֆ. Արուլաձեն հայտնի էր որպես հայերենի և վրացերենի առնչություններին, հատկապես այդ լեզուների փոխազդեցություններին, նրանց բառապաշարի առանձնահատկություններին նվիրված հետազոտությունների հեղինակ:

Ուշագրավ են նաև նրա կազմած գրառարի, վրացերենի (հայկական դպրոցների համար) դասագրքերը, ինչպես և հին վրացերեն-գրառար գրեթե ավարտված բառարանը:

Պրոֆ. Ի. Վ. Արուլաձեին մեր գիտական հասարակայնությունը ճանաչում էր որպես համեստ մարդու, տաղանդավոր գիտնականի, հայ և վրացի ժողովուրդների բարեկամության մեծ չատագովի:

Մ. ԲԱՐՈՒՐՅԱՆ